

ԲՈԶԵԻ 10-ՐԴ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

2002 թ. սեպտեմբերի 15-ից 21-ը Իրավիայի Բոզեի վանքում Կոնգրեսի 10-րդ Միջազգային Էկումենիկ Գիտաժողովը, որին իրենց մասնակցությունն էին բերել Կոնգրեսի Եկեղեցիների հրավիրյալ ներկայացուցիչներ և պարավիթալություններ՝ թվով շուրջ 100 մասնակիցներ: Գիտաժողովը կազմակերպվել էր Բոզեի վանքի կողմից, որը գտնվում է Տուրինի շրջակայքում: Տուրինը պատմական հին քաղաք է և հայրնի է Տիրոջ Սուրբ Պապանք-վարչամակով: Այժմ 70 միաբան եղբայրներ և քույրեր ունեցող այս վանքը հիմնադրվել և գործում է շուրջ 35 փարի: Հիմնադիրը վանահայր Էնցո Բիանչին է: Վանքում մեծ Կոնգրեսի է անցկացվում պարկերապարտության ու հրապարակական գործունեությանը, որոնցից էլ հիմնականում առաջանում է վանքի հասույթը:

Սեպտեմբերի 15-ից 17-ը գիտաժողովի նյութն էր՝ «Միմեոն Նոր Աստվածաբանը և Կ. Պոլսի վանականությունը»: Սեպտեմբերի 18-ը, ըստ գիտաժողովի ծրագրի, նշանակված էր որպես մշակութային օր, և գիտաժողովի բոլոր մասնակիցները մեկնեցին ուսուցիչ Կոնգրեսի Տուրինյան հայրնի Տիրոջ Սուրբ Պապանք-վարչամակով:

Սեպտեմբերի 19-ից 21-ի գիտաժողովը նվիրված էր Ռուս Ուղղափառ Եկեղեցուն, ի մասնավորի՝ «Օպարին անապարի Սուրբ Հայրերին»:

Գիտաժողովում բացման խոսքով հանդես եկավ Բոզեի վանահայր Հայր Էնցո Բիանչին, որը ողջունեց և շնորհակալություն հայտնեց բոլոր ներկայացուցիչներին՝ իր երախտագիտության խոսքն ուղղելով Եկեղեցու պետերին, ովքեր զույգ գիտաժողովները ողջունելու և օրհնելու համար իրենց ներկայացուցիչների միջոցով գրավոր խոսք էին ուղարկել:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի փնտրիությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայ Առաքելական Ս. Եկեղեցին Էկումենիկ այդ գիտաժողովում ներկայացրեց և Վեհափառի ողջույնի և օրհնության խոսքը փոխանցեց Հոգեշնորհ Տ. Արքայակ վրդ. Տիգրանյանը: Հայերենով ընթերցված Վեհափառի խոսքը միաժամանակ թարգմանվում էր իտալերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով:

Այնուհետև սկսվեցին նախօրոք ծրագրված դասախոսություններն ու երկխոսություններն անդամ Եկեղեցիների ներկայացուցիչների միջև: Առաջարկ եղավ երկրորդ անգամ ընթերցել Վեհափառ Հայրապետի խոսքը, և սեպտեմբերի 19-ից 21-ի գիտաժողովի ընթացքում այն վերստին ընթերցվեց և կրկին անգամ ընդունվեց մեծ խանդավառությամբ:

Գիտաժողովում ներկայացված էին մեր Եկեղեցու Հայրերի և հայրկապես Ս. Եղիշեի, Ս. Գրիգոր Նարեկացու, Ներսես Լամբրոնացու գործերի թարգմանությունները՝ հրապարակված առանձին գրքերով:

Բոզեի վանահայրը պարտաստականություն հայտնեց իրենց միջոցներով թարգմանել և հրապարակել մի շարք այլ հայ հեղինակների աշխատություններ ևս՝ կարևորելով Հայ Առաքելական Ս. Եկեղեցու պատմական դերը և այսօրվա գործունեությունը:

ԳԱՅԱՆԵ ԱԼԵԲՍԱՆՅԱՆ

Միջեկեղեցական հարաբերությունների բաժին